

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 2014թ. հոկտեմբերի 7-8 նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2014թ. հոկտեմբերի 7-ին՝ ժամը 20.00-ից ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**: Մասնակցում էին՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ,

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ.

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ՝ Մարդու իրավունքների պաշտպան,

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ,

ՀՐԱԶԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Հանձնաժողովի նիստն արձանագրում էր Հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչ Միքայել Մինասյանը:

Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցերը.

1. Հրապարակային ձևով երեք թեկնածուների (1.1 Ա.Հարությունյան, 1.2 Ա.Մելքումյան և 1.3 Ն.Կարապետյան) գրանցման վիճարկման հարցի քննարկում:

2. Նիստին չներկայացած թեկնածուների հարցի քննարկում:
3. Հարցազրույցի արդյունքների ամփոփման հարցը:
4. Մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը հաստատելու հարցը:

1. Օրակարգային 1-ին հարցի վերաբերյալ

1.1. Գ. Հարությունյանն առաջարկեց ուսումնասիրել Արմեն Հարությունյանի թեկնածուների ցուցակում ներգրավման հետ կապված ձեռք բերված փաստաթղթերը:

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը պարզեց հետևյալը.

Համաձայն «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի օրենքի 6-րդ հոդվածի «բ» կետի՝ փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի օպերատորը և ազգային օպերատորը պարտավոր է ապահովել հսկիչ ժամկետում նամակագրական թղթակցության առաքումը փոստային կապի ծառայություններից օգտվողներին: Համաձայն «Նամակագրական թղթակցության՝ փոստարկղերից հավաքման հաճախականությունը և փոստային առաքանիների անցման հսկիչ ժամկետները սահմանելու մասին» ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի 2005թ. հունիսի 20-ի թիվ 195-Ն հրամանի 1-ին կետի «բ» ենթակետի՝ Երևան քաղաքում ՀՀ փոստային առաքանիների անցման հսկիչ ժամկետ է սահմանվել «հանձնման օր+1 օր» սկզբունքով:

Փաստերով (Ա.Հարությունյանի հայտը պարունակող RR116728559AM ծածկագրով ծրար, նշված ծածկագրով առաքանիի էլեկտրոնային շարժը ցույց տվող առցանց փաստաթուղթ՝ կցվում է) հաստատվում է, որ Ա.Հարությունյանի հայտը 0078 փոստային բաժանմունք է ներկայացվել 23.09.2014թ.-ին՝ ոչ ուշ, քան 13.40-ը: Հետևաբար՝ Ա.Հարությունյանը իրավական կանխատեսելիության սկզբունքի տեսանկյունից կատարել է անհրաժեշտ ողջամիտ գործողություններ՝ իր հայտը պատշաճ ժամկետում՝ մինչև 24.09.2014թ.-ը ներկայացնելու համար:

Բացի այդ, սեպտեմբերի 24-ին Ա.Հարությունյանի հայտը ստանալու փաստը հաստատվում է ստացման ծանուցագրով, որի պատճենը Հանձնաժողովին է ներկայացվել նախապես (կցվում է): Ինչ վերաբերում է ստացման ժամին, ապա Հանձնաժողովը կարևորում է այն, որ համաձայն RR116728559AM ծածկագրով առաքանիի էլեկտրոնային շարժը ցույց տվող առցանց փաստաթղթի՝ Ա.Հարությունյանի հայտը բաշխիչ կենտրոնից թիվ 0078 փոստային բաժանմունքում ընդունվել է 24.09.2004թ. առավոտյան 10.04-ին:

Այնուհանդերձ, Հանձնաժողովը գտնում է, որ եթե անգամ հայտը փոստային կարգով ստացված լիներ 24.09.2014թ. ժամը 18.00-23.59 ընկած ժամանակահատվածում (եթե ֆիզիկապես և տեխնիկապես հնարավոր լիներ դրա առաքումը փոստից և/կամ ընդունումը նախարարությունում), ապա այն կհամարվեր պատշաճ, քանի որ Հանձնաժողովի կողմից հաստատված Հայտարարությունում սահմանված ժամը՝ 18.00-ը, ողջամտորեն վերաբերում էր միայն հայտը առձեռն հանձնելու տարբերակն ընտրած քաղաքացիներին և ուղղված էր նրանց վարքագծի կանխատեսելիության ապահովմանը:

Գ.Հարությունյանը, ամփոփելով ուսումնասիրության արդյունքները, առաջարկեց Արմեն Հարությունյանի գրանցումը համարել պատշաճ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված <<Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի>> 5-րդ կետով, Հանձնաժողովը

Որոշեց՝

- **Արմեն Հարությունյանի գրանցումը համարել պատշաճ:**

1.2 և 1.3 Արայիկ Մելքումյանի և Նորա Կարապետյանի գրանցման կապակցությամբ Հանձնաժողովը նպատակահարմար գտավ հրավիրել թեկնածուներին, քանի որ նրանց գործի նյութերը բավարար եզրահանգման գալու համար բավարար չէին:

Արայիկ Մելքումյանը և Նորա Կարապետյանը, ներկայանալով Հանձնաժողովի նիստին, պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ Հանձնաժողովի առաջարկին ի պատասխան 15 րոպե ժամանակ խնդրեցին գրավոր պարզաբանումներ ներկայացնելու համար: Հանձնաժողովի կողմից տրամադրած ժամանակից հետո նրանք ներկայացրեցին դիմումներ, որով խնդրեցին հարցազրույցի արդյունքներն իրենց մասով չամփոփել և գրանցման ցուցակից հանել (դիմումները կցվում են):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետով, Հանձնաժողովը

Որոշեց

- **Արայիկ Մելքումյանին և Նորա Կարապետյանին հանել հարցազրույցի մասնակիցների ցուցակից:**

2. Քննարկելով օրակարգի 2-րդ հարցը՝ Հակոբ Ղարախանյանի և Արմեն Մելքումյանի կողմից հարցազրույցին չներկայանալու փաստի ուժով հարցազրույցին չմասնակցած համարելու վերաբերյալ, Գ.Հարությունյանն առաջարկեց նրանց

համարել հարցազրույցին չմասնակցած: Նիստը վարողը տեղեկացրեց, որ Արմեն Մելքումյանը նախապես ինքնաբացարկ է ներկայացրել:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետով, Հանձնաժողովը

Որոշեց՝

- **Հակոբ Գեղամի Ղարախանյանին և Արմեն Մելքումյանին համարել հարցազրույցին չմասնակցած:**

3. Հանձնաժողովի անդամների կողմից գնահատումների արդյունքների հիման վրա յուրաքանչյուր թեկնածուի համար կազմվել են գնահատման թերթիկներ, որոնց վերաբերյալ կազմվել են առանձին արձանագրություններ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետով, Հանձնաժողովը

Որոշեց՝

- **Արձանագրել հարցազրույցի ամփոփման հետևյալն արդյունքները՝**
 - 1) Արմեն Շուրայի Հարությունյան- 95,67 միավոր,
 - 2) Արայիկ Գառնիկի Ղազարյան- 84,05 միավոր,

- 3) Վիգեն Վլադիմիրի Քոչարյան- 81,27 միավոր,
- 4) Վահե Միշայի Գրիգորյան- 72,66 միավոր,
- 5) Եղիշե Գրիգորի Կիրակոսյան- 71,58 միավոր,
- 6) Դավիթ Միերի Խաչատուրյան- 70,93 միավոր,
- 7) Դավիթ Լևոնի Հակոբյան- 69,6 միավոր,
- 8) Նելիկ Նիկողոսի Հարությունյան- 58,05 միավոր,
- 9) Լիզա Ռաֆիկի Գրիգորյան-57,01 միավոր:

4. Քննարկելով օրակարգի 4-րդ հարցը, հաշվի առնելով այն, որ 1-3-րդ տեղերը զբաղեցնող թեկնածուները արական սեռի ներկայացուցիչներ են, հիմնվելով սեռերի ներկայացվածության սկզբունքի վրա, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում երրորդ տեղը զբաղեցրած հավակնորդին փոխարինել առավելագույն միավորը հավաքած իգական սեռի ներկայացուցչով՝ Նելիկ Հարությունյանով և հաստատել Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացվող մրցույթում հաղթող ճանաչվածների հետևյալ ցուցակը՝

- 1) Արմեն Շուրայի Հարությունյան,
- 2) Արայիկ Գառնիկի Ղազարյան,
- 3) Նելիկ Նիկողոսի Հարությունյան:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված <<Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի>> 5-րդ, 27-րդ և 33-րդ կետերով, **Հանձնաժողովը որոշեց՝**

- Հաստատել (կազմել) Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացվող մրցույթում հաղթող ճանաչվածների հետևյալ ցուցակը (այսուհետ՝ Ցուցակ)՝

1) Արմեն Շուրայի Հարությունյան,

2) Արայիկ Գառնիկի Ղազարյան,

3) Նելիկ Նիկողոսի Հարությունյան:

- Ցուցակը՝ սահմանված փաստաթղթերի հետ միասին ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին:

- Լիազորել Հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանին՝ Ցուցակը Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնելու համար:

- Հանձնաժողովի անշխատակազմին՝ սահմանված կարգով հրապարակել Ցուցակը, ինչպես նաև հանրության համար հասանելի դարձնել սույն արձանագրությունը:

Նիստը վարողը հայտնեց, որ օրակարգային բոլոր հարցերը սպառված են և Հանձնաժողովի նիստը հայտարարում է ավարտված:

Նիստն ավարտվեց 08.10.2014թ. ժամը 01:55-ին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** 

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ 

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ _____

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ 

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐԱ ԶՈՒՐԱԲՅԱՆ

ՀՐԱԶԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ Միքայել Մինասյան